պատմում է մի անեկդոտ եւ, որովհետեւ ոչ ոք չի ծիծաղում, շփոթւում է)։ Հա էլի...էսպէս...մի խօսքով, այս գիշեր ճիշդ ժամը 8ին այստեղ եղէք, որովհետեւ զոռում է։

Զռո՞ւմ։ Մօտակայ սենեակի դաշնամուրի լարերը պայթում են։ Չեկիստ աշակերտների աչքերը բոցերի պէս սենեակի մէջ պարում են։ Տենօրը մի տեսակ անօթութիւն է զգում, դաշնամուրային գերմանական դպրոցը Տրիստանի վերջին տեսարանի հետ մեռնում է, իսկ իտալականը Բինեդետտօ Մարչելօի հետ ընկնում է բաց գերեզմանի մէջ։

Էսպէս։

— Չվախէք։ Տանը լաւ պատրաստեցէք ձեր պատասխանները։ Ով կեանքում լաւ բան է արել՝ թո՛ղ ասի. եթէ չի էլ արել՝ թո՛ղ նորից ասի — ինչ կա՞յ որ...

Ու երաժշտութիւնը մտահոգ դուրս նետուեց եւ փողոցից փողոց, տունից տուն, ծանօթ անծանօթի մօտ օգնութիւն խնդրեց եւ դողդըղալով մանդօլին նուագեց։

* * *

Մի մանրամասնութիւն։

Հայաստանի Երաժշտանոցի շէնքում, մի երկու տարի առաջ, ապրել էր Աթարբէկեանը։

Արիւնարբու Աթարբէկեանը։ Ահաւոր այն մարդը, որի անունը դանակի նման սրտերի մէջ էր խրւում եւ ահա սոսկալի տեսիլքներ արթնացնում։

Կողոպուտի, գնդակահարումների, բանտարկութիւնների այն տարին։ Տան առջեւից անցնում էին տասը քայլ հեռու, գլուխները կախ, թեւերը կուրծքի վրայ ծալած, արագ։ Մթնոլորտը դադարում էր շնչել, երկինքը խռպում էր, փողոցը սողոսկում։ Ամենափոքրիկ ձայնը կարող էր վտանգ սպառնալ։

Չեկա, գետնափոր, ատրճանակը ճակատին։

Ու այսօր, թէպէտ Աթարբէկեանը մեկնել է, սակայն, նա դեռ ներկայ է երեւանցիների ջղային կազմի մէջ, ուղեղի ինչ ինչ մասնիկներում եւ աղաւաղուած սրտերի անկանոն շընչառութեան մէջ։

Շատերը, տարուած նիւթապաշտ բացատրութիւններով, քաղաքացիների տարօրինակ դժգոհութիւնը վերագրում են մալարիայի մանրէներին կամ վատ սնունդին։ Իրականի մէջ այդպէս չէ. վկայ՝ երաժշտանոցից երկու քայլ այն կողմը գտնուող խենթանոցը։ Խենթանոցում գրեթէ մարդ չկայ, եթէ հաշուի չառնենք մի քանի դասական ապշութեան տիպարներ։ Արդ, ո՞ւր է գնացել խենթութիւնը։

Վառենք Z ճառագայթները։ Վերցնենք հիւանդանոցային այդ ուսումնասիրութեան համար նախ մի քանի անցորդներ, հէնց այստեղ, երաժշտանոցի առջեւ։

Ահա անցնում է մի մարդ։ Պարզ մի մարդ, որ գնում է իր գործին։ Մի քիչ մտազբաղ։ Տեսէք, ոտքը քարշ է տալիս։ Կանգնեց, ձեռքը տարաւ կրծքին ու ահա ժպտաց։ Մինակ ժըպտում է։ Գլխարկը հանեց, թէպէտ ցուրտ է, եւ վազեց։ Տասը քայլից յետոյ նորից ոտքը մի քիչ քարշ տալով գնաց։

Մի կին մօտակայ անկիւնում կանգնել է եւ բերանը բաց չորս կողմն է նայում։ Դէմքը կնճիռներով լեցուն, տարիքը առած կին է։ Թաշկինակը գրպանից հանում է ու նորից գըրպանը դնում։ Հաշուեցէք՝ եօթը անգամ։ Հիմա էլ գլուխը աջ ու ձախ է տանում, միշտ բերանը բաց։ Գլուխը քերում է։ Երկու բռունցքները շարժում է, կարծես ուզում է օդը մրճահարել։ Գլուխը վար ձգած, գնում է։

Ահա մէկը ուսերը անդադար վեր է բարձրացնում։ Աչքերը յառած մի կէտի վըրայ, ճանճի թռիչքը դիտողի նման, նա անցնում է արագ։ Յանկարծ վերադառնում է։ Կանգ է առնում, մի ոտքը վեր է բարձրացընում, չուանի վրայ հաւասարակշռութիւնը փնտռողի պէս ու նորից գնում է։

Ինչպէս երեւում է, զուման ժողովը պիտի շուտով սկսի, որովհետեւ ահա վարիչը։

Գլուխը բաց։ Մազերը տնկուած։ Կուրծքը առջեւ նետած ճեղքում է օդը, իսկ ետեւից՝ ծանր, ահագին կօշիկները ճիգ են անում ոտքերը բերելու։ Ձեռքի մեծ փայտը խփում է քարերին։ Դրան առջեւ կանգ է առնում, չորս կողմը նայում, տատանւում ու, ջուրը նետուողի նման՝ ինչ կը լինի կը լինի՝ մարմնի ամբողջ ծանրութեամբ ներս է խուժում։

Երաժշտանոցում մարդ չկայ։

Վարիչը վերարկուն հանում է, կախում։

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան